

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Լիբանանի Հանրապետության կառավարության միջև առևտրական, տնտեսական և գիտատեխնիկական համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Լիբանանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

ցանկանալով ամրապնդել երկու երկրների միջև առևտրական, տնտեսական և գիտատեխնիկական հարաբերությունները հավասարության և փոխշահավետության սկզբունքներով,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

### Հոդված 1

Պայմանավորվող կողմերը, իրենց ազգային օրենսդրության և կանոնակարգերին համապատասխան, կզարգացնեն կայուն առևտուր և տնտեսական համագործակցություն երկու երկրների միջև:

### Հոդված 2

Պայմանավորվող կողմերը միմյանց կտրամադրեն առավել բարենպաստ պայմաններ այն ամենի նկատմամբ, ինչը վերաբերում է.

- մաքսատուրքերին և ներմուծման ու արտահանման համար վճարումներին, ներառյալ նման տուրքերի և վճարումների գանձման մեթոդները,
- մաքսային պարզաբանումների, տարանցման, պահեստավորման և առաքման դրույթներին,
- ներմուծվող և արտահանվող ապրանքներին ուղղակիորեն առնչվող հարկերին և այլ ներքին վճարումներին, վճարման մեթոդներին և այդ վճարման փոխանցումներին,
- ներքին շուկայում վաճառքի, գնման, տրանսպորտի, ապրանքների օգտագործման և բաշխման կանոններին:

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կցուցաբերի իր երկրի ծագումն ունեցող կամ մյուս երկրի տարածք արտահանվող ապրանքների նկատմամբ անխտրական վերաբերմունք՝ ներկայացնելով քանակական սահմանափակումների, թույլտվությունների և դրամաշրջանառության վերաբերյալ տեղեկանք:

### Հոդված 3

2-րդ հոդվածի դրույթները չեն կիրառվում.

ա) այն արտոնությունների վրա, որոնք արդյունք են մաքսային միությունների կամ ազատ առևտրի գոտիների կամ տարածաշրջանային տնտեսական համաձայնագրերի ստեղծման, կամ՝ այն արտոնությունների վրա, որոնք մտադիր են տրամադրել նման միությունների, գոտիների կամ համաձայնագրերի ստեղծման համար,

բ) արտոնություններին, որոնք Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը տրամադրում է հարևան երկրների՝ սահմանամերձ առևտուրը հեշտացնելու նպատակով,

գ) արտոնություններին, որոնք Լիբանանի Հանրապետությունը տրամադրում է արաբական երկրներին՝ որպես Արաբական լիգայի անդամների:

### Հոդված 4

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն և կհեշտացնեն ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև կապերը, այդ թվում՝ պատվիրակությունների և գործարարների փոխայցելությունների, ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպման, տեղեկատվության փոխանակման միջոցով:

Պայմանավորվող կողմերը, իրենց ազգային օրենսդրության և կանոնակարգերի համապատասխան, կխրախուսեն իրենց արտաքին առևտրի կազմակերպությունների, ընկերությունների, ֆիրմաների, բանկերի և այլ առևտրական ինստիտուտների ճյուղային գրասենյակների բացմանը միմյանց տարածքներում:

### Հոդված 5

Ապրանքների և ծառայությունների ներմուծումն ու արտահանումը կիրականացվեն երկու երկրների ֆիզիկական և իրավաբանական անձանց կոնտրակտների հիման վրա՝ Պայմանավորվող կողմերի օրենսդրության և միջազգային առևտրային պրակտիկայի համաձայն: Պայմանավորվող կողմերը պատասխանատվություն չեն կրում ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ նման առևտրական գործարքներից ծագող պարտավորությունների համար:

### Հոդված 6

Հայաստանի Հանրապետության և Լիբանանի Հանրապետության միջև բոլոր առևտրական վճարումները պետք է իրականացվեն ազատ փոխարկելի միջազգային տարադրամով, եթե Պայմանավորվող կողմերի միջև այլ պայմանավորվածություն չկա:

#### Հոդված 7

Յուրաքանչյուր երկրի ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, համաձայն Պայմանավորվող կողմերի օրենսդրության և կանոնակարգերի, կարող են ազատ ներմուծել կամ արտահանել ապրանքներ և ծառայություններ փոխադարձ առևտրի, փոխհատուցման պայմանավորվածությունների կամ գործնական համագործակցության միջազգայնորեն ճանաչված ցանկացած այլ ձևով:

#### Հոդված 8

Երկու Պայմանավորվող կողմերի միջև, եթե այլ փոխպայմանավորվածություն չկա, Հայաստանից Լիբանանի Հանրապետություն և Լիբանանի Հանրապետությունից Հայաստան առաքված ապրանքները կոչված են փոխադարձաբար Հայաստանում և Լիբանանի Հանրապետությունում օգտագործվելու համար:

#### Հոդված 9

Պայմանավորվող կողմերը կխրախուսեն միմյանց ներդրումները և գիտատեխնիկական համագործակցությունը, այդ թվում՝ իրենց տարածքներում համատեղ ձեռնարկությունների հիմնադրման միջոցով, ինչպես իրենց ներպետական, այնպես էլ երրորդ երկրների շուկաների համար:

#### Հոդված 10

Պայմանավորվող կողմերը, յուրաքանչյուր կողմի պահանջով, անցկացնում են խորհրդակցություններ՝ սույն Համաձայնագրի մեկնաբանումը դյուրացնելու նպատակով, ինչպես նաև սույն Համաձայնագրի մեկնաբանման և կատարման հետ կապված վեճերի լուծման համար:

#### Հոդված 11

ա) Սույն Համաձայնագիրը պետք է հաստատվի երկու երկրների ներպետական իրավական ընթացակարգերի համաձայն և ուժի մեջ կմտնի արարողությունը հաստատող հայտարարագրերի փոխանակման օրվանից:

բ) Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է 5 տարի ժամկետով և ամեն անգամ կնորացվի 1 տարով, եթե Պայմանավորվող կողմերը միմյանց գրավոր չծանուցեն այն դադարեցնելու իրենց որոշման մասին: Այդ ծանուցագիրը պետք է ուղարկվի գրավոր, դիվանագիտական ուղիներով՝ սույն Համաձայնագրի ժամկետը լրանալուց առնվազն երեք ամիս առաջ:

գ) Այդ ժամկետը լրանալիս սույն Համաձայնագրի պայմաններն ու հանգամանքները կիրառվում են այն բոլոր կոնտրակտների վրա, որոնք կնքված են Համաձայնագրի գործողության ընթացքում և ավարտված չեն մինչև սույն Համաձայնագրի դադարեցումը:

Կատարված է Բեյրութ քաղաքում 1995 թվականի մայիսի 1-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, արաբերեն և անգլերեն: Բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Տարբեր մեկնաբանությունների դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1999 թվականի հոկտեմբերի 3-ից: